

Սիրելի Ծխականներ,

Գոհունակ սրտով կը տեղեկագրեմ թէ Աստուծոյ ողորմութեամբ եւ Ձեր նիւթական ու բարոյական օժանդակութեան շնորհիւ բոլորած ենք յաջող տարի մը:

Այս է պատկերը մեր մէկ տարուան գործունէութեան:

Եկեղեցական արարողութիւնները կեդրոնը կազմելով մեր կրօնական կեանքին, իւրաքանչիւր Կիրակի եւ տօնական օրերուն կատարած ենք եկեղեցական պաշտամունք եւ խօսած աւոր պատշաճի քարոզ սու ի միջիթարութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին:

Տարուան բոլոր Կիրակիներուն համար կը գործածենք հետեւեալ ժամանակացոյցը: Առաւօտեան ժամերգութիւն 9.30, Ս Պատարագ 10.00, Քարոզ 11.00:

Պաշտամունքը սովորաբար կը վերջանայ ժամը 11.30 ին:

Բարի եղէք ամէն կիրակի եկեղեցի գալ ընդունելու համար Աստուծոյ օրհնութիւնը եւ վայելելու մեր եկեղեցական արարողութիւնները:

Այս տարի ունեցանք հետեւեալ խորհրդակատարութիւնները:

Մկրտութիւն 1, Թարում 2: Ծնունդին եւ Ջատկին օրհնած ենք մեր ծխականներուն տուները, իսկ Մէմորեըլ-Տէյին օրհնած մեր ննջեցեալներուն գերեզմանները:

Այցելած ենք հիւանդներուն եւ սգաւորներուն եւ միջիթարած զիրենք:

Հսկած ենք Կիրակնօրեայ Վարժարանի եւ դասսահանդած Հայ Դպրոցին մէջ:

Նախագահած ենք Ծխական Խորհուրդի եկ կազմակերպութիւններու ժողովներուն:

Ապրիլ 18 ին Պ.Մանուկ Պակտիկեանին հետդիմաւորած ենք Առաջնորդ

Սրբազանը, ոք երեկոյին ժամերգութեան աւարտին եկեղեցւոյ սրահին մէջ ունեցանք ժողով մը եկեղեցական կազմակերպութիւններու հետ:

Առաջնորդ Սրբազանը Ապրիլ 19 ին պատարագեց, քարոզեց եւ ի ժամ Ս Պատարագի Աւագ Սարկաւագ ձեռնադրեց Տիրացու Բիւզանդ Առաքելեանը ու Ուրար կրելու արտօնութիւն տուաւ Տիրացու Սարգիս Ազարիկեանին: Սրբազանը Կիրակի կէսօրէ ետք նախագահեց եկեղեցւոյ օժման 29րդ տարեդարձին ու յաջորդ օրը մեկնեցաւ նիւնորք: Ապրիլ 29 ին ու 30 ին մասնակսեցանք Հոգեւորականաց Համագումարին Մայիս 1 ին ու 2 ին Պատգամաւորական ժողովին: Մայիս 27 ին Ֆէր Վիու Գերեզմանոցին մէջ Հոգւոց ըսինք պատերազմի մէջ մեռնող զինուորներուն համար:

Յուլիս 17 ին Տիկին Վայրլէթ Կալազանին ու Պ.Մանուկ Պաղտիկեանին
 հետ ներկայ եղանք նիւ - Պրիթլնի Եկեղեցիներու Յանձնաժողովի սարքած ժողով-
 ձաշկերոյթին եւ ներկայացուցինք մեր համայնքը: Նիւ-Պրիթլնի Հայ Սքուլի
 Տնօրէն Պ.Ֆիշի հրաւերին ընդառաջելով, Յուլիս 25 ին Շրջանաւարտներու Հանդէսին
 արտասանեցինք փակման արօթքը: Սեպտեմբեր 10 ին ներկայ եղանք Ռամկավառ
 Ազատական Կուսակցութեան ձաշկերոյթին ու սեղանը օրհնեցինք իսկ ճաշի աւարտին
 Հոգւոց ննջեցեալ անդամներու հոգիներուն համար: Նոյեմբեր 21 ին ներկայ եղանք
 Հարտփըրտի Ս Գէորգ Եկեղեցւոյ 17րդ. տարեդարձին եւ ներկայացուցինք մեր ծուխը :

Տեղեկագիրս վերջացնելէ առաջ կը փափաքիմ խորունկ ցաւկցութիւններս
 յայնել մեր սիրելի Ղեւոնդ Աւագ Սարկաւագ Տէր Մարկոսեանի մահուան համար:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Եզրափակելով խօսքս, կը փութամ շեշտել թէ Հայաստանեայց Եկեղեցին
 անկողոպտելի ժառանգութիւնն է Հայ ժողովուրդին, որուն պայծառութիւնն ու
 բարգաւաճումը կախում ունի մեր ցոյց տալիք նուիրումէն ու նախանձախնդրութենէն:

Կ'արօթենք առ բարձրեալն Աստուած որ օրհնէ համայնքիս ազնիւ ժողովուրդը:

Lyra f. S. Manoukian
 Վարդան ԲՆՆՅ.Տ Ասատուրեան
 Հոգեւոր հովիւ